



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՈՒ

«Մշակի» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրամյան և Բարոնակյան փողոցի մոտ):
Արևելքային լրագրության գլխավոր խմբագիրը. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարություններ ընդունվում են թէ՛ հայերեն, թէ՛ ռուսերեն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղացիների իրաւունքները խորհրդ. — ՆԵՐ-
ԲՈՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ
Ղազարից. Նամակ Սիմոնի Սիմոնի. Ներքին
լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ.
Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ
Խմբագրութեան:

ԳԻՒԼԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԽՈՂՆԵՐԻ

Մի գիւղացի կացութիւն է ստեղծվել
Անդրկովկասի այն գիւղացիների համար,
որոնց հողերում գտնվել են զանազան հան-
քային հարստութիւններ, օրինակ, պղինձ,
երկաթ, արծիւ, կօբալտ, շիւր, մարմա-
րիտ, նաւթ և այլն: Գիւղացիները իրանք
անկարող են շահագործել հանքերը, որով-
հետեւ դրա համար կարեւոր են թէ՛ խո-
շոր գրամագրութիւնը և թէ՛ տեխնիկական
գիտութիւնը: Առստի անխուսափելի կեր-
պով նրանք ստիպված են ընկնել եկտոր
կապտաւրասների ձեռքը, որոնք իրանց
հետ բերում են թէ՛ գրամագրութիւն և թէ՛
մասնագիտական ոյժեր: Հարց է, թէ ի՞նչ
կարող են անել մեր գիւղացիները, ինչ
միջոցներ կարող են ձեռք առնել նրանք,
որպէս զի օգտվեն այն հարստութիւննե-
րից, որ գտնվել են նրանց ապրած տե-
ղում: Նրանց մշակած հողերում:
Անկասկած, այդ հարցի ամենահասարակ

լուծումը այն կը լինէր, որ գիւղական հա-
սարակութիւնը ինքը ընդհանուր ոյժով
իր ձեռքն առնէր հանքի շահագործու-
թիւնը: Բայց այդ ձևը գիւղացի իրաւոր-
ծելի է, ուստի աւելի յարմար պէտք է
գտնել այնպիսի մի ձև, որ միայն գիւ-
ղացուն կապտաւրասի հետ, այսինքն հան-
քի շահագործութիւնը դարձնէր ընդ-
հանուր՝ գիւղացիների և կապտաւրասի
համար որոշելով յայտնի պայմաններ: Օ-
րինակ, եթէ կապտաւրասը համաձայնվէր
սկզբնական մի վճար տալ գիւղացիներին
հանքը գտնելու համար և ապա նշանա-
կէր արգելադրութիւններից մի յայտնի
տոկոս, նա կը կապէր առ միշտ գիւղացի-
ներին հանքագործութեան հետ և այդ-
պիսով չէր զրկի նրանց այն հարստու-
թիւնից, որ շահագործվում է նրանց
հողի մէջ:

Սա հարցի մի կողմն է: Կայ և մի ու-
րիշ կողմ: Այդ այն է, որ գիւղացիները,
ծանօթ չը լինելով գոյութիւն ունեցող
օրենսդրական, յաճախ բռնորոշ զորք
փում են իրաւունքներից այն հողերի վրա,
որտեղ գտնվում են հանքեր: Գիւղացիները
տասնեակ և հարիւրաւոր տարիներով ապ-
րելով մի և նոյն տեղում և փորփորելով
հողը զանազան անկիւններում, գտնում են
հանքերի հետքեր, բայց դրանց մասին
պաշտօնապէս չեն յայտնում ոչ ոքի և
յանկարծ մի օր տեղեկանում են, որ գիւղ

լու: Մի և նոյն ժամանակ խնայելով տեղն ու
ժամանակը՝ հարկաւոր եմ համարում հրապարակ
հանել յօդուածի միայն գլխաւոր կէտերի ստու-
թիւնը, թողնելով մանրամասնութիւնները, մա-
նաւանդ որ իմ դէմ յարուցված մեղադրանքնե-
րի անբարեխղճութիւնը, ինչպէս յայտ առնեմ,
բոլոր պարագաներովը հանդերձ, կը մերկայանան
անշուշտ պատշաճաւոր իշխանութեան միջոցով:
Աւելորդ չեմ համարում յիշել և այս թէ իմ մէջ
բերած փաստերի ամեն մի կէտ, առաջինից
սկսած մինչև վերջինը, հիմնված են հաւատարմ
և վստահական վկայագրերի վրա:

1) Նկեղեցական հողաբարձութեան նախկին
վարչութեան 14 անդամներից, որոնց նախագա-
հուն էի ես առաջ, 10 հոգին իրանց ղրբով և
ունեցած գրամական ապահովութիւններովը
գրամական հիմնարկութիւնների օգնութեան կա-
րօտ չէին, բացի դրանից՝ նրանցից և ոչ մէկը
կրեպիտ ունի «Волжско-Камский» բանկի մէջ, ուր
վերատուգող յանձնաժողովի անդամ եմ ես:
Ուրեմն իմ հակառակորդների հաւատարմեղը
թէ ես գրամական հաշիւների ճշւումն եմ ու-
նեցել հողաբարձութեան միւս անդամների վրա,
— մտաւածին զրպարութիւն է:

2) Նկեղեցական հողաբարձութեան ձեռնար-
կած Բոտովի տան շինութեան սկզբնաւորու-
թիւնը իմ թեղաբնութեամբ եղած չէ, որին շատ
ցատում եմ: Հողաբարձական վարչութեան նա-
խագահութիւնը դեռ յանձն չառած, այդ խնդ-
րից արդէն որոշված վերջապատ էր հողաբար-
ձական ժողովը 1894 թվի յունվարի 20-ին կա-
մած օրակարգով, և նոյն խնդրին վերաբերեալ հո-
գաբարձական բոլոր սկզբնական գործողութիւն-

եկած հիւրերից մէկը արդէն պաշտօնա-
կան յայտարարութիւն է տուել հանքա-
հողերի մասին և սեփականացրել հան-
քը: Այդ առարկութիւն չէր կարող անի
այն գէպըտմ, երբ մի մասնագէտ իր յա-
տուկ հետախուզութիւնների շնորհիւ
գտնէր հանքեր այնպիսի տեղերում, որ-
տեղ ոչ ոք առաջուց չէր գտել և չը զի-
տէր: Բայց զալ գիւղը և տեղեկանալով
գիւղացիներից այս և այն հանքի գոյու-
թեան մասին, զնալ ու յայտարարութիւն
տալ կառավարութեան, սեփականացնել ու-
րիշի հանքերը, անմասն թողնելով գիւ-
ղացիներին, դա կատարեալ անարդարու-
թիւն է:

Մեր գիւղական հասարակութիւնները
պէտք է արթնանան և իրանք պէտք է
շտապեն յայտարարութիւններ տալու կա-
ռավարութեան՝ իրանց գիւղերում գտնու-
ված հանքերի մասին: Այդպիսով նրանք
սեփականատէր կը հանդիսանան իրանց
հարստութիւններին, որոնց եթէ չը կա-
րողացան իրանք շահագործել, կը զիջեն
ուրիշին յայտնի մասնակցութիւն պահե-
լով, կամ վերջապէս, եթէ բոլորովին կը
ծախեն, կը ստանան որոշ վարձատրութիւն
իրանց ձեռքից դուրս եկած հողերի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Anatolio Latino.—Gli Arménie Zeittun.
Volume Primo, Secondo. Firenze, 1897. Lire 10.
Անատոլիո Լատինո.—Հայ ժողովուրդը և Ձէյ-
թունը. Հատոր Ա. և Բ. Փոքրեցեալ, 1897 թ. գինը
10 Ֆրանկ:

Երկու հատորից բաղկացած խալիբէն այս
երկաթիւրութիւնը, որ կազմված է 680 մեծ է-
ջերից, հրատարակվեց անցեալ տարվայ վերջը
Ֆլորենցիա քաղաքում: Կարելի է ասել, որ Հա-
յաստանի, հայոց պատմութեան և ժողովրդի
վերաբերեալ մինչև այժմ եւրօպական լեզուե-
րով հրատարակված և հասարակութեան ընթեր-
ցանութեան համար սահմանված բոլոր աշխա-
տութիւնների մէջ, Անատոլիո Լատինոյի այս
աշխատութիւնը ամենապատուաւոր տեղը պէտք
է բռնի: Հեղինակն իտալացի է, ծածկված «Ana-
tolio Latino» կեղծանունով: Նա, ինչպէս

ները՝ օրինական և շահաւէտ համարված լինե-
լով ընդունված էին 1894 թվի յունվարի 12-ին
տեղի ունեցած ծիսական ընդհանուր ժողովի մէջ:

3) Մտերազնականին հին տունը քանդված էր՝
տեղին վրա նոր շինուածը կանգնելու նպատա-
կով և որոշ վարձատրութիւններ էին տրված
մէջի վարձարներին՝ նրանց ունեցած պայմա-
նագրերը ղեղջելու և ժամանակից առաջ ընա-
կարանները պարպելու համար՝ 1894 թվի նո-
յեմբերի 19 սահմանված որոշմամբ, որ և հաս-
տատուված է ծիսական ընդհանուր ժողովի 1895
թվի յունվարի 4-ի կարգաւորութեամբ:

4) Նկեղեցական հողաբարձութեան կանոնա-
դրութեան 9-րդ յօդուածի զօրութեամբ, նրա
գործառնութիւնների և կառավարութեանը յան-
ձնված գումարների և կապերի հաշիւները կը
վերատուգէ ծիսական ընդհանուր ժողովը վեց
անձինքն եւ ձեռքով և այն իր մէջից
ընտրված և ոչ ընտն հողաբարձութեան ան-
դամներից, որովհետեւ վարչական ժողովի ան-
դամներից կազմված վերատուգող յանձնաժո-
ղովի գնումութիւնը՝ կը լինի անձնագատ ժողովի
ընտրութիւն:

Վերջ յիշված տան շինութեան երկու տար-
վան հաշիւները, իրանց ժամանակին, գնված
ու ստուգված էին վարձօրք ընդհանուր ժողովից
ընտրված օրինական վերատուգող յանձնաժո-
ղութեան ձեռքով, և նոյնը ընդունված և վաւե-
րացուցված են ընդհանուր ժողովների հաստա-
տութեամբ: Նոյնօրինակ օրինական յանձնաժո-
ղովի ձեռքով գնված ընդունված էր շինութեան
և վերջին, այն է՝ 1896 թվի տարեկան հաշիւը:
Բայց այդ հաշիւը տեսնելու համար գումարված

բացառութիւն է առաջարկել մէջ, կամենալով
անաչառ և անկողմնակալ կերպով ուսումնասի-
րել իր առարկան—հայ ազգի պատմութիւնը և
նրա ներկայ վիճակը—նպատակ դրեց իրան ան-
ձամբ ուսումնասիրել իր առարկան, որովհետեւ
մինչև այժմ հրատարակված եւրօպական աշխա-
տութիւնների մեծ մասը գրված է այնպիսի հե-
ղինակների ձեռքով, որոնք չեն ունեցել ոչ կա-
տարեալ ծանօթութիւն և ոչ էլ որոշ գաղափար
իրանց ընդած և նկարագրած առարկայի մասին:
Եւ երկար ժամանակ ապրելով արեւելքում և դը-
նալով Ձէյթուն քաղաքում, նպատակով, նա
տեղիւնուածը հաւաքեց հարկաւոր նիւթերը, ո-
րոնք հրատարակութիւն տուին նրան կազմել մի
անաչառ և անկողմնակալ աշխատութիւն և ի-
րաւունք՝ ասել այսօր թէ՛ «իմ երկարամասնա-
կեայ կենակցութիւնը արեւելիների հետ, երկու
վերջին տարիների մէջ պատահած դէպքերի ու-
սումնասիրութիւնը կարող են երաշխաւոր լինել
ընթերցողին, որ ես ինչպէս ընտելուց, դասե-
լուց և պատմելուց առաջ պէտք եղած ծանո-
թութիւնները և փորձառութիւնն ունեցել եմ»:

Առաջին հատորը, որ բաղկացած է 402 էջե-
րից և պարունակում է Հայաստանի մի մասնա-
մասն քարտէզը, վերաբերում է ընդհանրապէս
Հայաստանին և հայ ազգին, ամենահին ժամա-
նակներից Ուրարտուի թագաւորութիւնից սկսած
մինչև վերջին հայկական կոտորածները: Համա-
ռօտ, բայց ամփոփ և ճշգրիտ կերպով հեղի-
նակը նկարագրում է Հայաստանի անցեալը,
նախապատմական և պատմական շրջանները,
նրա վարչական և կուլտուրական վիճակը պար-
սիկների, արաբների տիրապետութեան տակ,
կրօնական խնդիրները, հայ եկեղեցու վարդա-
պետութեան ղեկավարութիւնը, առանձնապէս նա կանգ
է առնում ազգային հերոսներին—Վահանի, Վար-
դանի, Գալ Վահանի, Գաւրի Սրենցու, Մի-
թրի վրա, իսկ զանազան բռնակալների աւե-
րիչ արշաւանքները, ինչպէս, օրինակ, Բուղայի,
Արփ-Աղանի, Լէնկէմուրի, Շահ-Աբասի, Նա-
զիր-Շահի, բաւական մանրամասն պատմում է:
Մի առանձին գլուխ նուիրված է հայ ազգի և
նրա շրջապատող ու նրա գլխին պատուհաս
դարձած թիւրք, քիւրդ, չէքեզ և լալ ջեղերի
նկարագրութեան: Այդ ջեղերի տիպական պատ-
կերները, որոնք կցված են նկարագրութեան,
խիստ աչոյզված կարելի է համարել: Խոսելով
բուն հայոց հարցի, Սասունի և այլ կոտորած-

ընդհանուր ժողովին ներկայացրած չէ յանձ-
նաժողովի ղեկաւորները, ապա՝ յայտնում է
դրա փոխարէն մի նոր ղեկաւորներ, որ սարք-
ված էր օտար և կեղծ յանձնաժողովի միջոցով,
որին ընդհանուր ժողովը չէր ընտրել, ինչպէս
հողաբարձական կանոնը կը պահանջէ, այլ տե-
ղի էր ունեցել այդ ժողովը հողաբարձութեան
նոր կազմված վարչութեան մէջ և նրա ան-
դամներից ընտրված, օրէնքի հակառակ:

Իսկ թէ՛ արդիւն բարեխղճ և անաչառ դա-
տաստան կարելի էր սպասել ինքնակալ ազգ ժո-
ղովի ընդհանրութեանը, ինչպէս որ հաւատա-
յում է «Вирж. Вѣдомости» լրագրի յօդուածը, ա-
մեն ոք ինքը կարող է եղբակցանել, երբ
կլինանայ թէ՛ արդեւ եւ այդ յանձնաժողովի ա-
նաչառ անդամները: Նրանց մէջ գլխաւոր տեղն
է բռնում իմ նախորդը քաղաքապետի պաշտօ-
նում, որի պակասութիւնները իմ ձեռքով մեր-
կացրված լինելով, հրաժարեցրված էր քաղա-
քապետի պաշտօնից: Նա, ատելութեամբ կուրա-
ցած՝ վրէժխնդրութիւնը կեանքի նպատակ է
դարձրել այժմ և այդ յայտնի է քաղաքի մէջ
ամենքին: Կեղծ յանձնաժողովի միւս երեք ան-
դամները՝ մեր քաղաքի փոխադարձ վարկի ըն-
կերութեան անդամներ են—անդամներ այնպիսի
դրամական հաստատութեան, որի միջից մեծ
մասամբ դուրս են եկել իմ վրա եղած անբա-
րեխղճ ամբաստանութիւններն ու մատու-
թիւնները: Դրա պատճառներն ևս մեր քաղա-
քայինքին քաջ յայտնի են:

Ահա այսպիսի օրինական և անկողմ ձանաչ-
ված յանձնաժողովը կարողացել էր վերջապէս
զանազան մեղքներով ինքներով երկնել և՛ այս-

Քաղաքագլուխ Նոր-Նախիջևանի՝
Մինաս Պալապանեան

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13